Անդրէաս Արծրունին։ Այս պատկառելի գիտնականը, որքան ես յիշում եմ, 1875 կամ 1876 թ. Սղնախի, Թելաւի և Զաքաթալի վրայով ճանապարհորդելով, հասաւ Նուխի և այնտեղից Ուտիախօս Վարդաշէն աւանը և ապա սկսեց իւր ճանապարհորդական տպաւորութիւնների մասին գրել 76 թ. «Մշակի» զանազան համարներում։ Բայց շատ ափսոս, որ ձեռքիս տակը չունեմ յիշեալ թերթի այն համարները, որոնցից կարողանայի օգուտ քաղել։ Այսու ամենայնիւ, որպէս ուտիական անբախտ երկրի նեղեռ զաւակ, ինձ աւելի քաջ յայտնի են այդ ժողովրդի նիստն ու կացը, նրա բարքերն ու սովորութիւնները, քան թէ ուրիշ որ և է մէկին։

Հայոց պատմութիւնից և աշխարհագրութիւնից մեզ յայտնի է, որ Ուտի կամ Ուտիացոց աշխարհը համարւում էր Մեծն Հայաստանի 15 նահանգներից մէկը, որի սահմաններն են՝ հիւսիսից Դաղստանը և Կովկասեան լեռնաշղթան՝ մշտապէս սպիտակ ձիւնով պատած իւր Շահ-դաղ կոչուած գագաթով. արևելքից՝ Կասպեան ծովը, հարաւից Փայտակարանը և Սիւնեաց լեռները, իսկ արևմուտքից Գուգարաց աշխարհը։

Այդ ընդարձակ, բերրի, պտղաբեր, ջրառատ և հարուստ բուսականութեամբ լի ակնապարար հովտում ապրում էին հին ժամանակ մի քանի հարիւր հազարից բաղկացած Ուտիացիք, որոնք հոգով, սրտով, կրօնով և ջերմ զգացմունքներով սերտ կերպով կապուած՝ ապրում են իրենց ազգակից և հաւատակից Հայի հետ միասին,